

# ՉՐՈՅՑ ԼՈՆՏՈՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ

## ՅԱՅՏՆԻ ԴԷՄՔԵՐԷՆ՝

### ԴՈԿՏ. ՓՐՈՖ. ՀՐԱԶ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ ՀԵՏ

Արձակուրդով Լիբանան գտնուելուն առիթով, լոնտոնահայ գաղութի վերաբերյալ գրոյց մը ունեցանք նախկին լիբանանահայ եւ այժմ Յուզի ամիսին սկսեալ Անգլիոյ Օքսֆորտ համալսարանի Միջին Արեւելքի եւ հայագիտութեան նիւթերու դասախօս հրաւիրուած Հրաչ Չիլինկիրեանի հետ:

Արդարեւ, դոկտ. փրոֆ. Հրաչ Չիլինկիրեան Քեմպրիճի համալսարանէն Լոնտոն տարածելու քաղաքատնտեսութեան ճիւղերու յատուկ ակադեմիական տարբեր պաշտօններ վարած է: Ազգային գետնի վրայ եւս կը բերէ իր մասնակցութիւնը՝ ըլլալով Լոնտոնի Ս. Սարգիս եկեղեցւոյ ինստիտուտի պատմական նախագահ եւ Յիսուական խորհուրդի գործադրական տնօրէն: Որոնք եւ հետագայում միտք որպէս՝ իր մասնակցութեան վերաբերյալ յօդուածներով եւ ուսումնասիրութիւններով հանդէս եկած է ազգային եւ միջազգային մամուլի մէջ: 120 յօդուածներ ունի համացանցի վրայ (www.Hratch.info):

Մեր առաջին հարցը կը վերաբերէր լոնտոնահայ գաղութի հին գաղութ ըլլալու հանգամանքին, որ վերջին շրջանին քանակական աճ արձանագրեց: Որոնք էին պատճառները լոնտոնահայ գաղութի թիւի աճին: Հրաչ Չիլինկիրեան երեք հոսանքներու յառաջացումով բացատրեց ներկայ պատկերը: Անգլիական գաղութատիրութենէն ետքը Հնդկաստանէն, Կիպրոսէն եւ Աֆրիկէան որոշ երկիրներ հայեր հաստատուեցան Անգլիա: Այս երկիրներէ հաստատուող հայերու անգլիական քաղաքացիութիւն ունենալու առաւելութիւնն էր, որ դիրքութիւններ ընծայեց: Երկրորդ հոսանքը կու գար Միջին Արեւելքէն՝ Սուրիա, Իրան, Լիբանան եւ Իրաք: Միջին Արեւելքէն այս գաղթը Հրաչ Չիլինկիրեան վերագրեց անկախութեան եւ անապահովութեան քաղաքական պայմաններուն, զարգացնելով այն միտքը թէ հայ գաղթակիցներու ճակատագիրը կապուած է իրենց ապրած երկիրներու ապրած ճակատագրին: Հրաչ Չիլինկիրեանի կարծիքով արտագաղթ բառին գործածութիւնը իր իսկական առումով կ'առնչուի Հայաստանէն դուրս ելող հայերու պարագային: Ցաւալի իրողութիւնը այն է, որ Լոնտոն հաստատուող հայերու երրորդ հոսանքը կը կազմեն Հայաստանէն արտագաղթած հայերը: Անկախութենէն ասդին Հայաստանէն արտագաղթը կը շարունակուի: Գաղութի ղեկավարութեան համար անբացատրելի կը մնայ այն երեւոյթը, որ Հայաստանէն արտագաղթող հայերը չեն շարունակուում անհատական հայ համայնքներուն հետ: Բնական է, որ իրենց մասնակցութիւնը իր դրական նպաստը կը բերէ, բայց իրենք կ'ուզեն իրենք մէջ ապրիլ:

Ինչ է թիւը այսօր Անգլիոյ եւ լոնտոնահայութեան: Մինչեւ վիճակագրական տուեալներու յստակացումը 10-15 հազար կը գնահատուի հայութեան թիւը: Չափազանցուած թիւեր կը տրուին, որոնք իրականութեան չեն համապատասխաներ:

Գիտես ինչ Հրաչ, մեզի համար գերագոյն նպատակ է հայը հայ պահեն: Այս մեկնակէտով ալ ազգային, եկեղեցական, կրթական եւ մշակութային ինչ աշխատանքներ կը տարուին:

Վանաձորէն մեր կառոյցներէն, կ'ըսէ, Հրաչ Չիլինկիրեան, հայց. եկեղեցին կը մնայ հիմնականը, ուր համախմբուած հայութիւնը եւ անոր շուրջ ծառայած գործունեութիւնը կը ծառայեն հայապահպանութեան: Անգլիոյ մէջ կան հետեւեալ եկեղեցիները, Լոնտոն Ս. Սարգիս եկեղեցի, Մանչեսթըր Ս. Եղիշէ (Անգլիոյ ամենահին եկեղեցին է): Այս տարի Կիւլպէսեան հաստատութեան կողմէ կանոնադրուած Ս. Սարգիս եկեղեցւոյ հիմնադրութեան 90-ամեակն է: Այս առիթով ծրագրուած է կազմակերպել եկեղեցական, մշակութային եւ ընկերային բնոյթի ծննդնային, Սեպտեմբեր 2012-էն Յունուար 2013 երկարող ամիսներուն: Թուելու համար հիմնադրուած ցուցանիշները՝ շուրջուրի բաժնին մէջ Գերշ. Վահան Յովհաննէսեանի, առաջնորդ անգլիահայոց, «Աստուածաշունչը եւ Հայց. եկեղեցին» խորագրով գեկոյցը, Հրաչ Չիլինկիրեանի «Հաստիքի Արեւելքները եւ Հայց. եկեղեցին» սիւլոքը: Ծրագրուած են նաեւ բանաստեղծներ՝ Վահան Տերեանի եւ Պարոյր Սեւակի նուիրած երկերներ: Երաժշտական համայնքներ՝ շուրջակահար Անի Պաթիքեանի եւ մեզու Անայիս Հեղինակի կողմէ, ինչպէս նաեւ շուրջակահար Լեւոն Չիլինկիրեանի եւ թաւազարակահար Ալեքսանտր Շօշեանի կողմէ: Նիւ Եորքէն բանաստեղծուի Լոյլա Գունտաքճեանի կողմէ իր բանաստեղծութիւններուն ընթերցումով: Ընդգրկուած է ծննդեան երգերու հաւաքական երգեցողութիւնը: Վերջապահութեան տեղի պիտի ունենայ Ս. Սարգիս եկեղեցւոյ անուանակոչութեան նուիրուած մասնաւոր եկեղեցական արարողութիւն եւ ապա աւանդական մատաղի օրհնութիւնն եւ բաշխում եկեղեցւոյ շրջափակին մէջ:

Բացի եկեղեցիէն կը գործեն նաեւ միութիւններ, որոնց մէջ կարելի է ինչը ՀԲԸՄը, Համազգայինից, Նոր Սերունդը, Անա-

հիտը, Հայաշէնը եւ Հայ Հիմնարկը: Յիշուած միութիւնները իրենց տարեկան ծննդնայիններով ազգային հաւաքական ճիւղին իրենց նպաստը կը բերեն:

Հրաչ Չիլինկիրեան իր գրոյցի ընթացքին յատուկ կերպով շեշտը դրու Կահան եպիսկոպոս Յովհաննէսեանի գործունեութեան աշխուժութեան վրայ: Ան իր ջանքերով եկեղեցական եւ ազգային նոր ղեկավարութիւն յառաջացուց, որ իր հովանաւորութեամբ եւ քաջալերանքով կը գործէ: Մերտ գործակցութիւն կայ առաջնորդին եւ գործող ղեկավարութեան միջեւ: Ընդհանրապէս գործակցութեան առաջին անգամ ըլլալով ստեղծուեցաւ Ս. Սարգիս եկեղեցւոյ ծուկը: Ներկայիս թեմական կառոյց կ'այլ, աշխատանքային յայտագիրը առաջնորդին, իրեն համար առաջնորդը ունի նոր ծուխերու կազմութիւնը, նպատակ ունենալով ժողովուրդը մասնակից դարձնել եկեղեցական աշխատանքներուն: Այդ ջանքերուն շնորհիւ կազմուած են նոր ծուխեր, ինչպէս Իրլանտա (Տալին), Զարտիա (Պիրմիսկիա): Վեց եկեղեցական համայնքներու ներկայութեամբ կարելի պիտի ըլլայ առանձին թեմ ստեղծել մօտիկ ապագային, ըստ հայց. եկեղեցւոյ կանոնագրութեան: Այս նախաձեռնութիւններուն եւ աշխատանքներուն համար առաջնորդը կը վայելէ Ամենայն հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.ի հովանաւորութիւնը:

Չանդրադարձանք լեզուի հարցին: Շատ բնական է, որ տարուող աշխատանքները գնահատելի են եւ անոնք կրնան անգլերէն լեզուով ալ կայացուիլ: Մեր հասկացողութեամբ հայապահպանութիւնը պայմանաւորուած է լեզուով: Ինչ միջոցներ կը գործադրուին հայ լեզուն պահելու համար:

Ամենօրեայ դպրոց կ'այլ: Շաբաթօրեայ եւ Կիրակնօրեայ միօրեայ դպրոցներ կը գործեն (կիրակնօրեայ կրօնական իմաստով չէ): Միօրեայ այդ դպրոցներուն մէջ կը դասաւանդուին Արեւմտահայերէնը եւ Արեւելահայերէնը, որպէս լեզուներ: Արեւելահայերէնը Հայաստանէն արտագաղթածներու գաւախներուն համար: Հայ մշակոյթի մասին ընդհանուր գիտելիքներ եւ գաղափարներ կը տրուին: Արեւմտահայերէն եւ Արեւելահայերէնը դասաւանդողները ազգային գոհաբեր ոգիով կը կատարեն իրենց ուսուցչական պարտականութիւնը, առանց նիւթակայն որեւէ անկախութեան: «Սրբազան խնթեր» անշնչուտ, կը յարեն:

Իմ կարծիքովս կ'ըսէ Հրաչ, մասնաւորաբար խօսակցական լեզուի համար ամենակարեւորը տունն ու ընտանիքն են: Կերպով մը ամենօրեայ դպրոցը, անփոխարինելի ըլլալով հանդերձ, փոխարինուած պիտի ըլլան տունով եւ ընտանիքով: Դպրոցին բացակայութիւնը պիտի լեցուի տան մէջ հայերէն խօսակցութեամբ: Հայաստանը անգլիական ամենօրեայ դպրոցին մէջ անգլերէն լեզուն կը զարգացնէ եւ նաեւ անգլիական մտածողութիւնը: Հայերէնի բառապաշարը կը մնայ տկար: Ըստ այս իրականութեան, սփիւռքի մէջ ամենէն լուրջ խնդիրը լեզուի հարցն է: Նոյնի՛ն, երբ կ'աշխատուի, մեր մանուկներուն հայ լեզուն տարվեցնելով կենդանի պահել անոնց հայախօսութիւնը, խճողուած կ'ըլլայ օտար բառերով: Գործածած մէկ նախադասութեան մէջ երբեմն կը պատահի որ մէկը անելի օտար բառեր կ'ըսէ: Ասիկա անխուսափելի է: Այս իրականութեան մէջ այս վերադառնութենէն մեկնելով կարելի չէ միայն լեզուով պայմանաւորել հայ ըլլալը:

Իսկ հայ մշակոյթը, հայ պատմութիւնը, հայ անցեալը կ'ըստ Հրաչին:

Ինձի համար կը հաստատէ, Հրաչ հայապահպանում կը նշանակէ հայ մշակոյթը ապրիլ մեր առօրեային մէջ: Կարողա՞ւք մեր բանաստեղծները անոնց մասին խօսել: Ինչպէ՞ս, անոնց մասնաստեղծութիւնները ընթերցել տալով: Մեր երաժշտութեան մասին խօսել: Ինչպէ՞ս, Կոմիտաս եւ հաջատուրեան, ունկնդրել տալով: Նկարչութեան մասին խօսել: Ինչպէ՞ս մեր մանրանկարիչներու եւ գեղանկարիչներու՝ ինչպէ՞ս Մարտիրոս Սարգսեանի միջուկը Լեւոն Կարենիանէն գեղանկարները դիտելով: Մէկ խօսքով մշակոյթը մեր կենսակերպն է:

Ինչ կը վերաբերի գաղութի ապագային, Լոնտոնը ըլլալով աշխարհի առաջնակարգ քաղաքներէն մէկը, Լոնտոնէն նոր տեղաշարժեր տեղի չեն ունենար:


Չրոյցէն ետք Հրաչին կը յանձնէ «Կամար» գրականութեան եւ գեղարուեստի անկախ պարբերաթերթի 15-րդ համարը եւ Կիլիկիոյ կաթողիկոսութեան ծննդնային Արեւմտահայ լեզուի պաշտպանութեան ծրագրին նուիրուած ուղեցոյցը, Արամ Ա. Կաթողիկոսի նախաձեռնութեամբ:

# ԹՐՔԱԿԱՆ ՕՐԱԹԵՐՈՂ

## ՍԱՐՈՅԵԱՆԻ ՄԱՍԻՆ

Թրքական "Radikal" օրաթերթը անդրադարձած է աշխարհա-  
հռչակ հայ գրող Ռիլիմը Սարոյեանին եւ անոր՝ Պիլիպի հան-  
դեպ ունեցած սիրուն:

Յօդուածագիր Եուսէֆ Նազմը յիշեցուցած է, որ հայկական  
արմատներով գրողին վերջին ցանկութիւնն էր, որ իր գերեզ-  
մանը ըլլայ Պիլիպի մէջ: Սակայն 1980-ականներու թրքական  
իշխանութիւնները նման բան չէին թոյլատրեր:



«Վերջաբանները սովորաբար սարսափելի են եւ մարդուն  
թախիծ կը պատճառեն: Ամէն աւարտ անվերադարձ է: Դատար-  
կուած գիւղի մը անմարդաբնակութեան դիմադրել փորձող  
վերջին տան նման, մարտունակ ընդդիմացող կրակին՝ քամիին  
ընդդիմացող բողբոջն է նման...», գրած է ան:

Եուսէֆ Նազմը յիշեցուցած է, որ Սարոյեան ծնած էր 1908-  
ին ԱՄՆ-ի Զալիֆֆորնիա նահանգի Ֆրեզնո քաղաքին մէջ՝ հայ  
ներգաղթելու ընտանիքի մէջ: 3 տարեկանին, հօր մահէն ետք,  
եղբայրներուն հետ յայտնուած է մանկատուն եւ միշտ երազած  
է գրող դառնալ: Մահացած է 1981-ին, Նոյն Ֆրեզնոյի մէջ: 2008-ը  
գրականութեան մէջ ունեցած իր ներդրման համար UNESCO-ի  
կողմէ հռչակուած է «Սարոյեանի տարի»:

«Ամբողջ ցանկութիւնն էր, որ իր մարմինը ամփոփուի Պիլիպի  
մէջ»:

Ամերիկայի փոքրիկ քաղաքի մը մէջ ծնած եւ մահացած  
գրողի՝ Պիլիպի մէջ թաղուելու ցանկութիւնը պետք է պատճառ  
մը ունենար:

Սարոյեանի արմատները Անատոլիայէն են՝ Պիլիպիսէ: 1905-  
ին, մօտեցող աղետի նախազգացումը անոնց հասցուցած է Զալիֆֆորնիա՝  
ստիպելով ձգել իրենց պապերու՝ դարեր շարունակ ապրած հողերը:  
8 տարեկանին որբացած երեխայի՝ մեծե-  
րէն լսած պատմութիւններն էին, որ անոր ներաշխարհը այդպէս  
դարձնուին: Անոր ստեղծագործութիւնները անգլերէն էին՝  
սնուած անթիլեան հողով, իսկ հողին միշտ Անատոլիայինն է:

1964-ին Սարոյեան վերջապէս հնարաւորութիւն ունեցաւ  
տեսնելու սրտին մէջ փայփայած Պիլիպիսը, ուր ան երեխանե-  
րուն հետ վազեց այս ու այն կողմ, ամէն հանդիպածին «հայրե-  
նակից» անուանեց, համբուրեց ծառերը, քարերն ու հողը, տե-  
սաւ իր երազանքներու ծովը՝ Վանայ լիճը, խմեց ջուրէն: Տեսաւ  
հին, կործանուած տուները, գմբեթները, խոնարհուած եկեղե-  
ցիները, սակայն չտեսաւ գերեզմանները: Զարաքի հայկական  
չորս գերեզմանոցներուն մէջ չէր մնացած որեւէ գերեզմանա-  
քար: Եկեղեցւոյ մը հիմքին վրայ բանտ կառուցուած էր, ուրիշ  
մը այսո՞ւ դարձած էր:

Գտաւ տուն մը, որ հաւանաբար իր հայրական տունն էր,  
ծուկի կէպա այդ տան աներակներուն մօտ եւ անձայն արտաս-  
ւեցաւ: Ատելութիւն չգազաց, բարկութիւն չապրեցաւ, գրած է  
յօդուածագիրը:

Եուսէֆ Նազմը պատմած է, որ մեծ հայրերու՝ Պիլիպի մէջ  
ապրած միակ հայը այժմ ծերունի Սուրբի աղան է: Ան չէ հրա-  
ժարած իր ինքնուրոյն տարիները մաշած են սիրտը եւ ան  
մահուան ընդառաջ օրերը կը հաշուէ:

«Այս մարդը, որուն կը ծարրեն երեխաները, հազարաւոր այն  
հայերն են, որոնք ծամանակին ստիպուած եղան լքել այս հողերը»:

Ան պիլիպիցի վերջին հայն է...:

Ամէն վերջ ցաւուտ է: Կարսի մէջ, Արտահանի մէջ անոնց՝ աւե-  
լորդ համարուողներուն թիւը շատ նուագած է: Կ'ըսէի չէ, ամէն  
վերջ իրեն յատուկ ցաւը ունի: Ամէն ցաւ այլ վերջի մը նախա-  
շնանն է, - գրած է ան:

# ԱԹԵՆՔԻ ՀՆԱԿՈՅՆ ԹԱՐՄՈՆԸ 2500 ԱՐՈՒՄՆԵՐ



Աթենքի հանրահայտ Աքրոփոլիսի մօտ գտնուող Դիոնիսի  
հնամենի թատրոնը 2 500 տարուայ ընդմիջումէն ետք կրկին  
բացաւ իր դռները, կը գրէ Euromag-ը:

Հագարաւոր տարիներու դադարէն յետոյ այստեղ առաջին  
անգամ կը բեմադրուի հին յոյն ողբերգակ Եսքիլէսի «Շղթայա-  
կապ Պրոմէթէուսը» աշխատանքէն հատուած մը, որուն ընթաց-  
քին կը ինչէն նաեւ Գլիկի եւ Վիվալտիի ստեղծագործութիւն-  
ները: Նախատեսուած է, որ 2 դերասաններ կ'ընթերցեն Եսքի-  
լէսի ողբերգութեան բնօրինակէն պատառիկներ եւ այլուհետեւ  
կը թարգմանեն:

Բեմադրութեան առաջին ցուցադրութիւնը տեղի կ'ունենայ  
Սեպտեմբեր 22-ին եւ կը տեւէ մօտ 1 ժամ:

Դիոնիսի թատրոնը կը համարուի աշխարհի ամենահին  
թատրոններէն մէկը: Ան կառուցուած է 6-րդ դարուն եւ կ'ընդ-  
գրկէ 15 հազար հանդիսատէ: 2009թ. -էն սկսիին՝ թատրոնի  
վերանորոգման աշխատանքները կ'իրականացուին եւ կ'աւար-  
տին 3 տարուան ընթացքին:

# «ԿՐՆԱՆՔ, ՇՏԿԵԼ»

(Շարունակուած Բ. էջէն)

հայն է, որ հաւատացած է իր ըրած աշխատանքին կարելորու-  
թեան, բայց նաեւ՝ իր ազգային ինքնութեան եւ անոր մշակու-  
թային արժէքին:

Բայց մեր հայրենի եւ սփիւռքեան իրականութիւններուն մէջ  
տակալին կան «ծռած» եւ «ծռող» օրակարգեր:

Թէեւ հպարտ ենք անկախացած հայրենիքով եւ անոր պե-  
տականութեամբ, բայց նաեւ մտահոգ ենք անոր մէկը միւսին  
տեսնել գիրար հրմշտկող «ծռած» ու մնայուն կերպով «ծռող»  
րիավիճակներով: Սփիւռքեան համայնակական ընդհանուր  
իրավիճակն է մէջ եւս կան նմանօրինակ, տարբեր տարողու-  
թեամբ, բայց «ծուռ» կամ «ծռած» իրավիճակներ:

Ինչ ձեւով ու պարամետրով ալ փորձենք վեր առնել մեր հայ-  
կական համընդհանուր երեւոյթները եւ ի՞նչ պրիմակով ալ ու-  
զենք դիտել «ծուռ» եւ «ծռած» մեր ազգային բոլոր իրականու-  
թիւնները, կը մնայ մէկ կարեւոր եւ հրատապ առաքելութիւն ու  
մարտահրաւեր՝ «կրնա՞նք շտկել» ծանր ու ծուռը:

Եթէ արտաճանաչումը առաջին կարեւոր քայլն է ծռած երե-  
ւոյթներու կասեցման, սխալներուն նկատմամբ ներողամտու-  
թիւնը երկրորդ հանգրուանն է, ուրեմն շտկելու համար պատ-  
րաստակամութիւն, հոգի ու միտք ի գործ դնելը կը կազմեն  
գործընթացի ամբողջական անջանկ հասցնող ու կարեւոր  
օղակը:

Եթէ պիտի կանչինք շտկելու առաքելութեան, այս կը նշանա-  
կէ, թէ պարտինք պատրաստել եւ լիցքաւորել «հողը» եւ աշխա-  
տիլ նոյնիսկ հողին «կազմաւորման» ուղղութեամբ, ինչպէս  
եղած է Փիլաթի աշտարակի պարագային:

Հայուն «հողը» կը պատրաստուի մարդակերտումի եւ հայա-  
կերտումի անհրաժեշտ գրականներով: Իսկ հայուն հողին  
կազմաւորումը կը կայանայ ազգակերտման իրականութեան  
մէջ: Եթէ ազգակերտումի հրամայականը հայրենի մակարդակի  
վրայ պիտի նշանակէր Հայաստանի հզօրացումն ու անոր պե-  
տականութեան եւ ընկերային-տնտեսական վարչաձեւի կազ-  
մաւորումը, ապա սփիւռքի մակարդակի վրայ՝ հայապահպան-  
ման մեծ, ամբողջական եւ ընդհանրական առաքելութեան  
կանչիլն ու անոր ի խնդիր ամէն ինչ ընելը:

Իտալիայէն երկու նշմար: Բայց մէկ մեծ ու կարեւոր աշխա-  
տանքային հրամայական՝ «Կրնա՞նք շտկել»:

Եթէ Լեւոնեան վարժարանը եւ մեր բոլոր ազգային  
եկեղեցական կառոյցները այսօր կը շարունակեն գոյատեւել՝ ի  
գին մեծ զոհողութիւններու, ուրեմն տակալին կը հաւատանք  
«շտկելու» կարելորութեան: Շտկել սխալը, ծուռը, ծռելու  
ենթական: Շտկելով է, որ կարելի է պահել արժէքը:

Արժէքը՝ հայ մարդուն, հայ ինքնութեան եւ հայ ազգին: